ԱՄՆ-ը բարձրացնում է խաղադրույքները հարավկովկասյան խաղում

ԱՌՎԱԿ կենտրոնի մեկնաբանությունը, 13.03.2024 թ.

«Երկկողմ ռազմավարական մեխանիզմի» շրջանակներում բանակցությունների նպատակով Թուրքիայի արտգործնախարար Հաքան Ֆիդանի՝ ԱՄՆ կատարած այցից հետո միջազգային լրատվամիջոցներն արդեն նյութեր են հրապարակում՝ հղում տալով երկու երկրների համապատասխան գերատեսչություններին և քաղաքական գործիչներին: Հարցի վերաբերյալ առկա տեղեկատվությունը ամբողջական չէ, և հնարավոր չէ լիարժեք պատկերացում կազմել բանակցային օրակարգի և, ամենակարևորը՝ ձեռք բերված պայմանավորվածությունների մասին:

Այս համատեքստում թուրքական հեռուստատեսությամբ մանրամասն ելույթ է ունեցել Թուրքիայում ԱՄՆ-ի դեսպան Ջեֆ Ֆլեյքը՝ ընդգծելով, որ արդեն իսկ կան կոնկրետ արդյունքներ պաշտպանական համագործակցության, առևտրի աճի և Սիրիայի ու ԻԼԻՊ-ի հարցում երկու երկրների դիրքորոշումների համաժամանակեցման հետ կապված: Միևնույն ժամանակ, դեսպանը նշել է, որ Վաշինգտոնն ու Անկարան, իբր դեռ չեն կարողացել համաձայնության գալ թուրքական բանակին սպասարկող ռուսական ՀՕՊ համակարգերի և Թուրքիայի կողմից ԱՄՆ-ից «5-րդ սերնդի» բազմաֆունկցիոնալ կործանիչներ գնելու հնարավորության շուրջ: Ջ. Ֆլեյքի հայտարարությունները, առաջին հայացքից, բավականին համոզիչ կերպով արտացոլում են թե՛ բանակցությունների սպասվող օրակարգը, և թե՛ արդյունքները: Համենայնդեպս, նա ոչ մի սենսացիոն գաղափար չի հնչեցրել, ինչպես և չի հայտարարել ԱՄՆ-ի և Թուրքիայի միջև «բեկումնային», դարակազմիկ համաձայնությունների մասին կետերը:

Ընդսմին, որոշակի հիմքեր կան պնդելու, որ նման պայմանավորվածություններ, այնուամենայնիվ, եղել են, և, հայտնի պատճառներով, Ֆլեյքը ցույց է տվել միայն այն, ինչ դրված է «կրկնակի հատակով տուփի» մակերեսին: Ի դեպ, դրա մասին է վկայում նաև այն փաստը, որ Ֆիդանի հետ ԱՄՆ է մեկնել թուրքական հետախուզության (MIT) ներկայիս ղեկավար Իբրահիմ Կալինը, սակայն թուրքական և ամերիկյան լրատվամիջոցները նախընտրել են չանդրադառնալ այս «աննշան» մանրուքին: Ամերիկա–թուրքական բանակցությունների վերաբերյալ պաշտոնապես հրապարակված թերևս ամենահետաքրքիր լուրը, որը թույլ է տալիս սենսացիոն եզրակացություններ անել, Բլինկենի և Ֆիդանի համատեղ հայտարարությունն է առ այն, որ Վաշինգտոնն ու Անկարան պայմանավորվել են համագործակցել հայ–ադրբեջանական հակամարտությունը լուծելու և Երևանի ու Բաքվի միջև խաղաղության համաձայնագրի ստորագրմանը նպաստելու վերաբերյալ:

Սա կարող է նշանակել միայն մեկ բան՝ Ռուսաստանին Հարավային Կովկասից դուրս մղելու գործընթացը մտել է վճռական փուլ: Հայ–ադրբեջանական հակամարտության կարգավորման մասին հայտարարության մեջ չի խոսվում Ռուսաստանի մասին, իսկ

միջնորդի դերում Թուրքիայի ներգրավումը վկայում է Մոսկվային տարածաշրջանից վերջնականապես մեկուսացնելու Վաշինգտոնի ծրագրերի մասին, որում Արևմուտքը մտադիր է տեսնել Անկարային՝ որպես միակ «նայող» և «դատավոր»՝, որը, սակայն, իր հերթին հաշվետու է լինելու միայն ԱՄՆ-ին: Ընդսմին, չի բացառվում, որ ԱՄՆ-ում ընտրություններից հետո Վաշինգտոնի առաջնահերթությունները տարածաշրջանում կարող են փոխվել և ճշգրտումների ենթարկվել՝ համաձայն Թրամփի՝ ռուսական և իրանական խնդիրների լուծման տեսլականի, ինչը, բնականաբար, կազդի վերը նկարագրված աշխարհաքաղաքական կոմբինացիայի ապագայի վրա:

Իսկ առայժմ, մի կողմից՝ Երևանի և Մոսկվայի միջև քաղաքական հարաբերությունների վատթարացման, մյուս կողմից՝ «Թուրքիայի հետ հարաբերությունների նոր դարաշրջան» բացելու Հայաստանի իշխանությունների ցուցադրական պատրաստակամության ֆոնին, Բայդենի վարչակազմը չի կարող բաց թողնել պատեհ առիթը, երբ նրա փաստացի արբանյակի (Թուրքիայի) համար հնարավոր կլինի ստեղծել խաղաղ և արդար երկրի կերպար, որը հավասարապես հեռու է հայկական և ադրբեջանական շահերից ու պատրաստ է երաշխավորել կողմերի հաշտեցումը՝ փոխադարձ հարգանքի և շահերի համաձայնության հիման վրա: Համարձակվենք ենթադրել, որ ամերիկացի բանակցողները համոզել են իրենց թուրք գործընկերներին ուշադրության նշաններ ցուցաբերել Երևանի նկատմամբ, կտրուկ չափավորել ագրեսիվ հռետորաբանությունը, պատրաստակամություն ցուցաբերել ակտիվ քաղաքական և տնտեսական գործընկերության համար (սահմանի ապաշրջափակում, վիզային ռեժիմի ազատականացում և, ինչու ոչ, օգնություն արցախցի փախստականներին և այլն), իսկ մյուս կողմից՝ ճնշում գործադրել Բաքվի վրա՝ խաղաղ բանակցությունների համատեքստում դադարեցնելու հայկական տարածքների սողացող օկուպացիայի գործողությունները և Երևանի հանդեպ առավելապաշտական պահանջները:

Հարավային Կովկասը Մոսկվայից խլելու խաղում խաղադրույքները բազմիցս ավելացել են, խաղն ընթանում է մեծ մասշտաբով, իսկ սահմանամերձ գյուղերի, անկլավների, վարելահողերի և այլնի վերաբերյալ ադրբեջանական «մանր» պնդումներն այժմ կարող են խանգարել Հայաստանի գլոբալ «ապառուսաֆիկացման» սկսված գործընթացին և, դրան զուգընթաց, հայ հասարակության կողմից ադրբեջանա-թուրքական աշխարհի հետ խաղաղ գոյակցության հնարավորության ներդրված գաղափարի զգուշավոր ըմբռնմանը:

Եթե մոտ ապագայում Թուրքիայի ագրեսիվ ամբարտավան հռետորաբանության կտրուկ անկում լինի, և հայ-ադրբեջանական բանակցային օրակարգում ի հայտ գա կառուցողականություն և առաջընթաց, ապա բոլոր հիմքերը կլինեն պնդելու, որ Ռուսաստանի դեմ մեծ խաղում ամերիկյան խոշոր խաղադրույքներն արդարացված են: